ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից 1995թ. սեպտեմբերի 19-ի որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝

Martin Galstyan

Digitally signed by Martin Galstyan
Date: 2024.11.29 15:39:18 AMT
Reason: Գրանցած է 29.11.2024թ.

ՓՈՓՈԽՎԱԾ Է

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ միակ բաժնետիրոջ կողմից 2024թ. հոկտեմբերի 25-ի որոշմամբ

գլխավոր գործադիր տնօրեն՝

Irina Seylanyan

Digitally signed by Irina Seylanyan
Date: 2024.10.25 16:51:24 +04'00'

Իրինա Սեյլանյան

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Արդշինինվեստբանկ»
փակ բաժնետիրական ընկերություն

(նոր խմբագրություն)

Երևան 2024

Հոդված 1. Ընդհանուր դրույթներ

1.1. «Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը (ստորև՝ Բանկ) իրավաբանական անձ է, որը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրված լիցենզիայի հիման վրա և համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության՝ իրավունք ունի բանկային գործունեություն իրականացնել ՀՀ տարածքում և նրանից դուրս:

1.2. Բանկը հիմնադրվել է փակ բաժնետիրական ընկերության կազմակերպա-իրավական ձևով «Միդլենդ Արմենիա Բանկ» ԲԸ անվանումով՝ համաձայն 1995թ. սեպտեմբերի 19-ի Հիմնադիր ժողովի որոշման (արձանագրություն թիվ 001), 1999թ. մարտի 24-ին վերանվանվել է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի, իսկ 2024թ. հոկտեմբերի 25-ին՝ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի: Բանկը կազմավորվել է և գործունեություն է իրականացնում «Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան:

1.3. Բանկի պաշտոնական լրիվ անվանումն է.
հայերեն՝ «Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերություն
անգլերեն՝ “Ardshininvestbank” Closed Joint Stock Company
Բանկի պաշտոնական կրճատ անվանումն է.
հայերեն՝ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ
անգլերեն՝ “Ardshininvestbank” CJSC

1.4. Բանկի իրավաբանական հասցեն է.
Հայաստանի Հանրապետություն, 0015, ք. Երևան, Պարոնյան փողոց, 42 շենք, 90 տարածք:

1.5. Բանկը հիմնադրված է անորոշ ժամկետով:

1.6. Բանկն իրավաբանական անձ է և ունի իր միակ բաժնետիրոջ գույքից առանձնացված գույք, իրավունք ունի իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, ստանձնել պարտավորություններ և դատարանում հանդես գալ որպես հայցվոր և պատասխանող:

1.7. Բանկը պատասխանատվություն չի կրում իր միակ բաժնետիրոջ պարտավորությունների համար, իսկ վերջինս պատասխանատվություն չի կրում Բանկի պարտավորությունների համար: Բանկի պարտավորությունների համար նրա միակ բաժնետերը պատասխանատվություն է կրում բաժնետոմսերի անվանական արժեքի սահմաններում:

Հոդված 2. Բանկի գործառնությունները

2.1 Բանկն իրավունք ունի Հայաստանի Հանրապետության տարածքում և դրանից դուրս բանկային գործունեություն, ինչպես նաև ֆինանսական գործառնություններ և դրանց հետ կապված կամ դրանցից բխող այլ գործունեություն իրականացնել, այդ թվում՝

ա) դրամական միջոցներ ընդունել ավանդների, վարկերի, ընթացիկ հաշիվների ձևով՝ առանց ապահովման կամ ապահովմամբ և տեղաբաշխել դրանք՝ վարկեր, ավանդներ տրամադրելու և/կամ ներդրումներ կատարելու միջոցով.

բ) տրամադրել վարկեր և փոխառություններ՝ ապահովմամբ կամ առանց ապահովման, իրականացնել լիզինգի գործառնություններ, իրականացնել դրամական պահանջների զիջման դիմաց ֆինանսավորում (ֆակտորինգ).

գ) թողարկել, գնել, վաճառել կամ այլ կերպ սպասարկել արժեթղթեր և այլ գործիքներ, իր անունից և իր հաշվին արժեթղթերով, ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքներ կատարել, ինչպես նաև արժեթղթերում ներդրումներ կատարել.

դ) մատուցել ներդրումային և ոչ հիմնական ծառայություններ՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի.

ե) օրենքով սահմանված պահանջները բավարարելու դեպքում իրականացնել ներդրումային ֆոնդի (ներառյալ՝ կենսաթոշակային ֆոնդի) պահառության գործունեություն.

զ) տրամադրել, մարել և վճարել վարկային նամակներ (ակրեդիտիվներ).

է) իրականացնել արտարժույթի և թանկարժեք մետաղների բանկային (ստանդարտացված) ձուլակտորների առուվաճառք.

ը) իրականացնել գույքի հավատարմագրային (լիազորագրային) կառավարում և ի պահ ընդունել դրամական միջոցներ, արժեթղթեր, փաստաթղթեր, թանկարժեք քարեր, մետաղներ և այլ արժեքներ.

թ) իրականացնել վճարահաշվարկային ծառայություններ, այդ թվում՝ բացել, վարել, սպասարկել բանկային հաշիվներ, ներառյալ՝ բանկերի թղթակցային հաշիվները.

ժ) տրամադրել բանկային երաշխիքներ.

ժա) իրականացնել ինվեստիցիոն և բաժանորդագրական գործունեություն, մատուցել ֆինանսական գործակալի ծառայություններ.

ժբ) մատուցել հաճախորդների վարկարժանության գնահատման ծառայություններ.

ժգ) իրականացնել պարտքերի հավաքման հետ կապված գործողություններ.

ժդ) իրացնել ապահովագրական վկայագրեր և/կամ պայմանագրեր, օրենքով սահմանված կարգով իրականացնել ապահովագրական գործակալի գործառնություններ.

ժե) իրականացնել «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հաշվի օպերատորի գործառույթներ.

ժզ) իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ գործառնություններ:

Հոդված 3. Բանկի կանոնադրական հիմնադրամը

3.1. Բանկի կանոնադրական հիմնադրամը կազմում է 18 434 350 000 (տասնութ միլիարդ չորս հարյուր երեսունչորս միլիոն երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, որը փաստացի ամբողջությամբ համալրված է ՀՀ դրամով:

3.2. Բանկի կանոնադրական հիմնադրամը բաժանված է 609 400 (վեց հարյուր ինը հազար չորս հարյուր) սովորական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝ 30 250 (երեսուն հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ անվանական արժեքով, որոնք ամբողջությամբ վճարված են սույն Կանոնադրության վերագրանցման պահին:

3.3. Բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են և պատկանում են Բանկի միակ բաժնետիրոջը՝ «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերությանը:

3.4. Բանկը կարող է տեղաբաշխել քվեարկելու իրավունք տվող կամ առանց այդ իրավունքի արտոնյալ բաժնետոմսեր, ինչպես նաև լրացուցիչ տեղաբաշխել սովորական բաժնետոմսեր: Բանկն իրավունք ունի համախմբել (կոնսոլիդացնել) տեղաբաշխված բաժնետոմսերը՝ ավելացնելով դրանց անվանական արժեքը, կամ բաժանել դրանք ավելի փոքր անվանական արժեքի բաժնետոմսերի:

3.5. Բանկի փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամը կարող է ավելացվել բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացմամբ կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխմամբ:

3.6. Բանկի փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամը չի կարող նվազեցվել, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Հոդված 4. Բաժնետիրոջ իրավունքները

4.1. Բանկի միակ բաժնետերն իրավունք ունի՝

ա) օրենքով և սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել Բանկի կառավարմանը.

բ) միանձնյա որոշումներ կայացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ բաժնետերերի ընդհանուր ժողովի, ինչպես նաև սույն Կանոնադրությամբ իր իրավասությանը վերապահված բոլոր հարցերի վերաբերյալ՝ անհրաժեշտության դեպքում խորհրդակցելով Բանկի այլ մարմինների կամ երրորդ անձանց հետ.

գ) օրենքով սահմանված կարգով տեղեկություններ ստանալ Բանկի գործունեության վերաբերյալ և ծանոթանալ Բանկի հաշվապահական գրքերին, հաշվեկշռին, հաշվետվություններին և այլ

փաստաթղթերին: Բանկի միակ բաժնետերը պարտավորվում է չհրապարակել Բանկի կառավարման և վերստուգման ընթացքում իրեն հայտնի դարձած այն տեղեկությունները, որոնք կազմում են բանկային, առևտրային կամ այլ գաղտնիք.

դ) մասնակցել շահույթի բաշխմանը, շահութաբաժիններ ստանալ Բանկի գործունեությունից առաջացած շահույթից.

ե) նախապատվության իրավունքով ձեռք բերել Բանկի կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը՝ օրենքով և սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով.

զ) օրենքով և սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինել իր բաժնետոմսերը.

է) Բանկի լուծարման դեպքում օրենքով սահմանված կարգով ստանալ Բանկի գույքի իրեն հասանելիք մասը կամ դրա արժեքը.

ը) Բանկի մյուս կառավարման մարմինների կողմից ընդունված՝ գործող օրենքներին և այլ իրավական ակտերին, ինչպես նաև սույն Կանոնադրությանը հակասող որոշումների բողոքարկման նպատակով հայցով դիմել դատարան.

թ) իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենքներով և սույն Կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ:

4.2. Բանկի միակ բաժնետերն իրավունք ունի անվճար ստանալու Բանկի վերջին տարեկան հաշվետվության և արտաքին աուդիտի եզրակացության պատճենները: Բանկի միակ բաժնետիրոջ պահանջով Բանկը նրան պետք է անվճար տրամադրի օրենքով սահմանված տեղեկությունները: Տեղեկությունները բաժնետիրոջը տրամադրվում են բաժնետիրոջ գրավոր դիմումի հիման վրա՝ դիմումը Բանկ ներկայացնելու պահից հինգ օրվա ընթացքում:

Հոդված 5. Նախապատվության իրավունքը

5.1. Բաժնետոմսերի լրացուցիչ տեղաբաշխման դեպքում Բանկի միակ բաժնետերը օգտվում է տեղաբաշխվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունքից:

5.2. Եթե լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերը՝ գնելու առաջարկի պահից 60 օրացուցային օրվա ընթացքում սույն Կանոնադրության 5.1. կետի համաձայն ձեռք չեն բերվել Բանկի միակ բաժնետիրոջ կողմից, ապա Բանկի խորհուրդը կարող է առաջարկել դրանք երրորդ անձանց՝ իր կողմից սահմանված պայմաններով (սակայն ոչ ավելի բարենպաստ պայմաններով, քան սահմանված են եղել Բանկի միակ բաժնետիրոջ համար):

Հոդված 6. Բանկի կառավարման մարմինները

6.1 Բանկի կառավարման մարմիններն են՝
- միակ բաժնետերը,
- խորհուրդը (ստորև՝ Խորհուրդ),
- Գլխավոր գործադիր տնօրենը:

Հոդված 7. Միակ բաժնետերը

7.1. Բանկի կառավարման բարձրագույն մարմնի գործառույթներն իրականացնում է Բանկի միակ բաժնետերը:

7.2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ բացառապես բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովում քննարկվող հարցերի վերաբերյալ Բանկի միակ բաժնետերը որոշում է կայացնում հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո վեց ամսվա ընթացքում (տարեկան որոշում): Բանկի միակ բաժնետիրոջ՝ տարեկան որոշումից տարբերվող մյուս բոլոր որոշումները համարվում են արտահերթ որոշումներ:

7.3. Այն դեպքերում, երբ Բանկի միակ բաժնետիրոջ կողմից համապատասխան որոշման կայացմանը, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, պետք է նախորդի Բանկի որևէ մարմնի կամ երրորդ անձի հաշվետվության, եզրակացության ներկայացումը, կամ Բանկի միակ բաժնետերը ցանկանում է որևէ հարցի վերաբերյալ խորհրդակցել Բանկի որևէ մարմնի կամ երրորդ անձի հետ, այդ նպատակով կարող է հրավիրվել նիստ: Նման նիստը կարող է անցկացվել ոչ միայն այդ նիստին հրավիրված անձանց համատեղ ֆիզիկական ներկայությամբ, այլ հեռախոսային, հեռուստակապի, էլեկտրոնային կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում:

7.4. Սույն Կանոնադրության 7.3. կետում նշված նիստերին իրավունք ունեն մասնակցելու՝

ա) Բանկի միակ բաժնետերը.

բ) Խորհրդի անդամները և Բանկի Գլխավոր գործադիր տնօրենը.

գ) Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման անդամները.

դ) Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձը (եթե նրա եզրակացությունը առկա է գումարվող նիստի օրակարգի հարցերում).

ե) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ներկայացուցիչները.

զ) օրենքով նախատեսված այլ անձինք:

7.5. Սույն Կանոնադրության 7.3. կետում նշված նիստի հրավիրման նպատակով վերջինիս մասնակիցներին պետք է ծանուցում ուղարկվի նիստի անցկացումից առնվազն 1 աշխատանքային օր առաջ, եթե ծանուցումն ուղարկվում է էլեկտրոնային փոստի կամ

ծրագրային/հավելվածային որևէ հարթակի (այդ թվում՝ բջջային հավելվածի) միջոցով, և առնվազն 5 աշխատանքային օր առաջ, եթե ծանուցումն ուղարկվում է փոստային եղանակով: Ծանուցումների ուղարկման և նիստի հրավիրման համար պատասխանատու է Ընկերության քարտուղարը, ով այդ աշխատանքների առնչությամբ հաշվետու է Բանկի միակ բաժնետիրոջը:

7.6. Սույն Կանոնադրության 7.3. կետում նշված նիստերն արձանագրվում են Ընկերության քարտուղարի կողմից: Արձանագրությունները ստորագրվում են (ներառյալ՝ էլեկտրոնային ստորագրությամբ կամ էլեկտրոնային հաստատմամբ մեկ միասնական կամ առանձին փաստաթղթերի տեսքով) Բանկի միակ բաժնետիրոջ և Ընկերության քարտուղարի կողմից: Այդ արձանագրություններից քաղվածքները տրամադրվում և ստորագրվում են Ընկերության քարտուղարի կողմից:

7.7. Բանկի միակ բաժնետիրոջ որոշումները ստորագրվում են միայն վերջինիս կողմից (ներառյալ՝ էլեկտրոնային ստորագրությամբ կամ էլեկտրոնային հաստատմամբ): Ընկերության քարտուղարն է պատասխանատու Բանկի միակ բաժնետիրոջ որոշումների նախագծերը կազմելու և յուրաքանչյուր նախագծում արծարծվող հարցերի վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի փաթեթը նախագծի հետ միասին Բանկի միակ բաժնետիրոջը ժամանակին ներկայացնելու համար:

7.8. Բանկի միակ բաժնետիրոջ իրավասությանն են պատկանում.

ա) Բանկի կանոնադրության հաստատումը, ինչպես նաև կանոնադրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելը, կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելը.

բ) Բանկի կանոնադրական հիմնադրամի փոփոխումը.

գ) Բանկի վերակազմակերպման ու լուծարման հարցերը, լուծարային հանձնաժողովի նշանակումը, միջանկյալ, ամփոփ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը.

դ) Բանկի հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.

ե) իր որոշմամբ սահմանված և սույն Կանոնադրության մեջ ամրագրված Խորհրդի քանակական կազմի սահմաններում Խորհրդի անդամների նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, Խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը.

զ) Խորհրդի ներկայացմամբ Բանկի անկախ աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

է) Բանկի տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշռի, շահույթների և վնասների բաշխման, ինչպես նաև աուդիտորական եզրակացության հաստատումը.

ը) Բանկի կրած վնասների, կորուստների դիմաց պահուստավորման գումարի սահմանումը կամ այդպիսի վնասներ կրելու ռիսկի այլ կերպ ապահովումը.

թ) Բանկի տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը, տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի հաստատումը.

ժ) Բանկի գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ օրենքով սահմանված դեպքերում, բացառությամբ Բանկի բնականոն տնտեսական գործունեության շրջանակներում կատարվող գործարքների: Սույն Կանոնադրության իմաստով Բանկի բնականոն տնտեսական գործունեության շրջանակներում կատարվող գործարք է նաև հանդիսանում Բանկի կողմից իրականացվող ֆինանսական գործառնությունների շրջանակներում Բանկի պարտապան հանդիսացող անձանց պարտավորությունների կատարմանն ի ապահովում տրամադրված գրավի առարկայի նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Բանկի պահանջների բավարարման նպատակով բռնագանձում տարածելու և այն իրացնելու հետևանքով Բանկի կողմից գրավի առարկայի առնչությամբ սեփականության իրավունքի ձեռքբերման և հետագայում նման գրավի առարկայի օտարման ցանկացած գործարք.

ժա) Բանկի գործարքներում շահագրգռվածություն ունեցող անձանց հետ գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ օրենքով սահմանված դեպքերում.

ժբ) Բանկի դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը, դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը, առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը.

ժգ) սույն Կանոնադրությամբ և օրենքով սահմանված այլ լիազորություններ:

7.9. Վերը թվարկված լիազորությունները հանդիսանում են Բանկի միակ բաժնետիրոջ բացառիկ իրավասությունը, բացառությամբ «ժբ» կետով սահմանված լիազորությունների:

Հոդված 8. Խորհուրդը

8.1. Խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ Խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում:

8.2. Խորհրդի անդամները նշանակվում են Բանկի միակ բաժնետիրոջ տարեկան որոշմամբ մեկ տարի ժամկետով: Բանկի Խորհրդի քանակական կազմը սահմանվում է 5 անդամ:

8.3. Բանկի միակ բաժնետիրոջը Խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ կարող է ներկայացնել Խորհուրդը: Խորհուրդը Խորհրդի անդամության թեկնածուներ առաջադրում է Ընկերության քարտուղարի միջոցով սույն Կանոնադրության 7.3. կետում նշված նիստ հրավիրելու և այդ նիստի ընթացքում թեկնածուների վերաբերյալ մանրամասն տեղեկություններ Բանկի միակ բաժնետիրոջը ներկայացնելու միջոցով:

8.4. Խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի անդամների կազմից՝ Բանկի միակ բաժնետիրոջ առաջարկությամբ և Խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Այն դեպքում, երբ Խորհրդի նիստին բացակայում է Խորհրդի նախագահը, Խորհրդի ներկա անդամներն իրենց կազմից ձայների պարզ մեծամասնությամբ տվյալ նիստի համար ընտրում են Խորհրդի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար՝ տվյալ նիստը նախագահելու նպատակով: Խորհրդի անդամները չեն կարող Բանկում այլ պաշտոն զբաղեցնել:

8.5. Խորհրդի նախագահը՝

ա) կազմակերպում է Խորհրդի աշխատանքները,

բ) գումարում և նախագահում է Խորհրդի նիստերը,

գ) կազմակերպում է Խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը,

դ) նախագահում է սույն Կանոնադրության 7.3. կետում նշված նիստերը (մասնակցության դեպքում),

ե) կազմակերպում է Խորհրդին կից հանձնաժողովների աշխատանքը:

8.6. Խորհրդի անդամների լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել՝ օրենքով նախատեսված դեպքերում: Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում Բանկի միակ բաժնետերը պետք է կայացնի արտահերթ որոշում Խորհրդի նոր անդամի նշանակման վերաբերյալ:

8.7. Խորհրդի իրավասությանն են պատկանում Բանկի ընդհանուր ղեկավարմանը վերաբերող հարցերը, այդ թվում՝

ա) Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը՝ ներառյալ Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը.

բ) Բանկի միակ բաժնետիրոջը վերջինիս իրավասությանը վերապահված ցանկացած հարցի վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումը.

գ) Բանկի գույքի շուկայական արժեքի որոշումը՝ օրենքով սահմանված դեպքերում: Բանկի փոքրարժեք գույքի շուկայական արժեքի որոշման նպատակով Խորհուրդը կարող է հաստատել շուկայական արժեքի որոշման օբյեկտիվ չափորոշիչներ/բանաձևեր, որոնց կիրառման դեպքում ինքնաբերաբար կհաշվարկի

համապատասխան գույքի շուկայական արժեքը, և հաշվարկված արժեքը կհամարվի որոշված Խորհրդի կողմից՝ առանց այդ գույքի արժեքի մասով Խորհրդի առանձին որոշման կայացման անհրաժեշտության: Սույն Կանոնադրության իմաստով փոքրարժեք գույք է համարվում այն գույքային միավորը, որի հաշվեկշռային մնացորդային արժեքը դրա շուկայական արժեքի որոշման պահի դրությամբ չի գերազանցում հիսուն միլիոն ՀՀ դրամի շեմը.

դ) Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Բանկում ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատակիցների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.

ե) Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի և կատարողականի հաստատումը.

զ) Բանկի միակ բաժնետիրոջ հաստատմանը Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը և Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի վարձատրության չափի սահմանումը.

է) Բանկի բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ Բանկի միակ բաժնետիրոջ համար առաջարկությունների նախապատրաստումը և միջանկյալ շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը.

ը) պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

թ) Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը.

ժ) Բանկի գույքի փոխանցման հետ կապված խոշոր (բացառությամբ Բանկի բնականոն տնտեսական գործունեության շրջանակներում կատարվող գործարքների) և շահագրգռվածության առկայությամբ կնքվող գործարքների կնքումը՝ օրենքով նախատեսված դեպքերում.

ժա) Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի, աշխատատեղերի հաստատումը և կադրային քաղաքականության որոշումը, բացառությամբ այն աշխատատեղերի հաստատումների, որոնք վերաբերում են Գլխավոր գործադիր տնօրենին անմիջապես ոչ հաշվետու աշխատակիցներին.

ժբ) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և Բանկի միակ բաժնետիրոջը ներկայացումը.

ժգ) Բանկի տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը և կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառութային պարտականությունների բաշխումը.

ժդ) Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը.

ժե) Բանկի կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը, այդ թվում ֆինանսական գործառնությունների և վերահսկողության իրականացման կանոնակարգերի հաստատումը.

ժզ) Բանկի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հիմնումը, վերակազմակերպումը և լուծարումը.

ժէ) Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի, ինչպես նաև Գլխավոր գործադիր տնօրենի ներկայացմամբ՝ Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալի և Գլխավոր հաշվապահի նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.

ժը) առևտրային կազմակերպությունների միություններին մասնակցությունը.

ժթ) Բանկի միակ բաժնետիրոջ ոչ բացառիկ իրավասությանը վերապահված այլ հարցեր, որոնք վերջինիս որոշմամբ ժամանակ առ ժամանակ կփոխանցվեն Խորհրդի իրավասությանը.

ի) օրենքով նախատեսված այլ որոշումների ընդունումը:

8.8. Սույն Կանոնադրության 8.7. կետի «ա» – «ժը» ենթակետերում թվարկված որոշումների ընդունումը հանդիսանում է Խորհրդի բացառիկ իրավասությունը:

8.9. Խորհուրդը իրավասու է, եթե նիստին ներկա են Խորհրդի անդամների մեծամասնությունը:

8.10. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա Խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե ձայների ավելի մեծ քանակ չի պահանջվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, բացառությամբ 8.7. կետի «ժ» ենթակետում նախատեսված խոշոր գործարքների կնքման դեպքերի, որոնց վերաբերյալ որոշումներն ընդունվում են միաձայն:

8.11. Խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ:

8.12. Խորհրդի նիստի մասին ծանուցումը էլեկտրոնային (էլեկտրոնային փոստի կամ ծրագրային/հավելվածային որևէ հարթակի (այդ թվում՝ բջջային հավելվածի) միջոցով) կամ փոստային եղանակով պետք է ուղարկվի Խորհրդի անդամներին նիստից առնվազն յոթ օր առաջ: Հրատապ հարցերի շուրջ որոշումներ կայացնելու անհրաժեշտության դեպքում Խորհրդի նիստի մասին ծանուցումը կարող է ուղարկվել նաև ավելի կարճ ժամկետում:

8.13. Խորհրդի որոշումները կարող են ընդունվել հեռակա քվեարկության (հարցման) միջոցով: Հեռակա քվեարկությունը իրականացվում է Խորհրդի անդամներին էլեկտրոնային փոստի միջոցով հարցումներ

ուղարկելու և դրանց վերաբերյալ պատասխաններ ստանալու միջոցով: Հեռակա քվեարկությամբ անցկացվող Խորհրդի որոշումը համարվում է ընդունված, եթե «կողմ» է քվեարկել Խորհրդի անդամների մեծամասնությունը, եթե ձայների ավելի մեծ քանակ չի պահանջվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Խորհրդի անդամը համարվում է հեռակա քվեարկությանը մասնակցած, եթե վերջինիս պատասխանը ստացվում է Ընկերության քարտուղարի կողմից մինչև հարցման մեջ նշված վերջնաժամկետը: Այդ վերջնաժամկետից հետո ստացված պատասխանները հաշվի չեն առնվում հեռակա քվեարկության արդյունքների ամփոփման նպատակով: Հեռակա քվեարկության արդյունքները պետք է ամփոփվեն Ընկերության քարտուղարի կողմից հարցման մեջ նշված վերջնաժամկետի օրը, որն էլ հանդիսանում է համապատասխան որոշման կայացման օրը: Հեռակա քվեարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրվում է Ընկերության քարտուղարի կողմից: Վերջինս նաև կազմում է Խորհրդի որոշման փաստաթղթային տարբերակ, որը ստորագրվում է Խորհրդի նախագահի կողմից (ներառյալ՝ էլեկտրոնային ստորագրությամբ կամ էլեկտրոնային հաստատմամբ):

8.14. Խորհուրդը կարող է որոշումներ ընդունել այնպիսի նիստում, որի ժամանակ Խորհրդի նիստի բոլոր մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային կապի, հեռուստակապի, էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա կարգով անցկացված նիստ չի համարվում: Հեռախոսային, հեռուստակապի, էլեկտրոնային կամ այլ կապի միջոցով անցկացվող Խորհրդի նիստի վերաբերյալ ծանուցումն իրականացվում է սույն Կանոնադրության 8.12. կետով սահմանված կարգով և ժամկետներում:

8.15. Խորհրդի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի առաջարկություններ ներկայացնել Խորհրդի նիստի օրակարգի վերաբերյալ, մասնակցել քննարկումներին և քվեարկել սահմանված կարգով:

8.16. Քվեարկությունը Խորհրդի նիստում իրականացվում է «մեկ անդամ մեկ ձայն» սկզբունքով:

8.17. Առնվազն տարին մեկ անգամ Խորհուրդն իր նիստում քննարկում է արտաքին աուդիտն իրականացնող անձի հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը), ինչպես նաև քննարկում և անհրաժեշտության դեպքում վերանայում է Բանկի գործունեության հիմնական ուղղությունները, ռազմավարությունը, կարգերն ու ներքին իրավական այլ ակտերը: Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը) քննարկվում է հաշվետվությունը Բանկ ներկայացվելուց հետո առաջիկա Խորհրդի նիստում: Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի

ներկայացուցիչները հրավիրվում են Խորհրդի նիստին՝ նշված հարցի քննարկմանը մասնակցելու նպատակով:

8.18. Առնվազն եռամսյակը մեկ անգամ կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ պարբերականությամբ Խորհուրդը իր նիստում քննարկում է Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման, Գլխավոր գործադիր տնօրենի և Գլխավոր հաշվապահի հաշվետվությունները, ինչպես նաև Բանկի կատարած գործարքների և հաստատած գործարար հարաբերությունների, կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների ու աշխատակիցների գործողությունների՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխանության ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները (ստորև՝ ՓԼԱՖ հաշվետվություններ): Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը, Գլխավոր գործադիր տնօրենը և Գլխավոր հաշվապահը իրենց հաշվետվությունները ներկայացնում են Խորհրդին՝ Խորհրդի համապատասխան նիստից առնվազն յոթ օր առաջ: Հաշվետվությունների քննարկմանը մասնակցում են Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը, Գլխավոր գործադիր տնօրենը, Գլխավոր ֆինանսական տնօրենը և Գլխավոր հաշվապահը, ՓԼԱՖ հաշվետվությունների համար պատասխանատու անձը և/կամ Խորհրդի հրավերով այլ անձինք: Քննարկման արդյունքում Խորհուրդը կարող է համապատասխան հանձնարարականներ տալ ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարին, Գլխավոր գործադիր տնօրենին, Գլխավոր ֆինանսական տնօրենին և/կամ Գլխավոր հաշվապահին:

8.19. Խորհրդի նիստերը արձանագրվում են Ընկերության քարտուղարի կողմից, ով պատասխանատու է Բանկի կորպորատիվ կառավարման պահանջներին համապատասխան նիստերի կազմակերպման և անցկացման համար: Արձանագրությունը ստորագրվում է Խորհրդի անդամների և Ընկերության քարտուղարի կողմից (ներառյալ՝ էլեկտրոնային ստորագրությամբ կամ էլեկտրոնային հաստատմամբ): Խորհրդի որոշումներից կամ նիստերի արձանագրություններից քաղվածքները տրամադրվում և ստորագրվում են Ընկերության քարտուղարի կողմից:

8.20. Խորհուրդը կարող է ստեղծել Խորհրդին կից հանձնաժողովներ: Խորհրդին կից հանձնաժողովներում կարող են ընդգրկվել ֆսսէամները, ինչպես նաև Խորհրդի կողմից նշանակված Բանկի այլ ղեկավարները և աշխատակիցները: Խորհրդին կից հանձնաժողովներն ունեն խորհրդակցական գործառույթներ: Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը կամ այլ անդամը հրավիրվում է Խորհրդին կից հանձնաժողովների նիստերին:

Հոդված 9. Բանկի Գլխավոր գործադիր տնօրենը

9.1. Բանկի գործունեության ընթացիկ ղեկավարումը իրականացնում է Գլխավոր գործադիր տնօրենը: Բանկում տնօրինություն չի ստեղծվում: Գլխավոր գործադիր տնօրենը նշանակվում է Խորհրդի կողմից: Բանկի մյուս ղեկավարները նշանակվում են Գլխավոր գործադիր տնօրենի կողմից, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

9.2. Գլխավոր գործադիր տնօրենի իրավասությանն են պատկանում բոլոր այն հարցերը, որոնք օրենքով կամ սույն Կանոնադրությամբ չեն հանդիսանում Բանկի միակ բաժնետիրոջ, Խորհրդի, ներքին աուդիտի ստորաբաժանման կամ Գլխավոր հաշվապահի իրավասությունը:

9.3. Գլխավոր գործադիր տնօրենը՝

ա) Բանկը ներկայացնում է երրորդ անձանց հետ հարաբերություններում, պետական կազմակերպություններում, դատական և այլ մարմիններում.

բ) տնօրինում է Բանկի գույքը և ֆինանսական միջոցները, գործարքներ և պայմանագրեր է կնքում Բանկի անունից.

գ) աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է Բանկի աշխատակիցներին, կնքում է աշխատանքային պայմանագրեր.

դ) գործում է առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր.

ե) իրականացնում է օրենքով և սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

9.4. Գլխավոր գործադիր տնօրենի բացակայությամբ Գլխավոր գործադիր տնօրենի պարտականություններն իրականացնում է Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալը, իսկ վերջինիս բացակայությամբ օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ Բանկի մեկ այլ ղեկավար՝ համաձայն լիազորությունների փոխանցման պատշաճ արձանագրության:

Հոդված 10. Բանկի ներքին աուդիտը

10.1. Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման (ստորև՝ Ներքին աուդիտ) ղեկավարը և անդամները նշանակվում են Խորհրդի կողմից:

10.2. Ներքին աուդիտը՝

ա) անկախ գնահատական է տալիս Բանկի ներքին հսկողության, այդ թվում՝ ռիսկերի կառավարման համակարգերի, Բանկի

կառավարման համակարգի և գործընթացների որակի, համարժեքության և արդյունավետության վերաբերյալ.

բ) եզրակացություններ և առաջարկություններ է տալիս Խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ:

10.3. Ներքին աուդիտի ստորաբաժանման անդամները կարող են մասնակցել Խորհրդի նիստերին և նրանց տրամադրվում են Խորհրդի նիստերի արձանագրությունների պատճենները:

10.4. Ներքին աուդիտի ղեկավարը Խորհրդին և Գլխավոր գործադիր տնօրենին ներկայացնում է հերթական և արտահերթ հաշվետվություններ՝ օրենքով սահմանված կարգով:

10.5. Օրենքների և այլ իրավական ակտերի խախտումներ հայտնաբերելու դեպքում Ներքին աուդիտը Խորհրդին է ներկայացնում հաշվետվություն՝ միաժամանակ առաջարկելով այդ խախտումների վերացման և ապագայում չկրկնման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումներ: Խորհուրդը կարող է քննարկել Ներքին աուդիտի հաշվետվությունը Խորհրդի նիստում և համապատասխան հանձնարարականներ տալ Բանկի ղեկավարներին:

Հոդված 11. Բանկի մասնաճյուղերը և ներկայացուցչությունները

11.1. Բանկը կարող է Հայաստանի Հանրապետությունում և նրա տարածքից դուրս հիմնել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

11.2. Բանկի մասնաճյուղերը և ներկայացուցչությունները չունեն իրավաբանական անձի կարգավիճակ և գործում են Բանկի անունից՝ վերջինիս կողմից տրված լիազորությունների սահմաններում և հաստատված կանոնադրության հիման վրա:

Հոդված 12. Ֆինանսական դրույթներ

12.1. Բանկում հաշվապահական հաշվառումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության:

12.2. Բանկի ֆինանսական տարին համընկնում է օրացուցային տարվա հետ:

12.3. Բանկի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնում է Բանկի միակ բաժնետիրոջ կողմից նշանակված անկախ աուդիտորական կազմակերպությունը:

12.4. Բանկը ստեղծում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահուստային հիմնադրամներ:

12.5. Բանկի զուտ շահույթը կարող է օգտագործվել շահութաբաժինների վճարման, Բանկի գործունեության և պահուստային հիմնադրամին կատարվող մասհանումների նպատակով:

12.6. Բանկի Գլխավոր հաշվապահն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:

Բանկի Գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Բանկի հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան կամ այլ պարբերականությամբ անհրաժեշտ հաշվետվությունների պատրաստման, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Բանկի միակ բաժնետիրոջը, պարտատերերին և մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցներին Բանկի մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 13. Բանկի լուծարումը

13.1. Բանկը կարող է լուծարվել օրենքով նախատեսված հիմքերով և կարգով:

13.2. Բանկի ինքնալուծարումն իրականացվում է Բանկի միակ բաժնետիրոջ որոշմամբ՝ համաձայն գործող օրենսդրության:

13.3. Բանկի ինքնալուծարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

13.4. Լուծարային հանձնաժողովն ընտրվում է Բանկի միակ բաժնետիրոջ կողմից՝ առնվազն երեք անդամի կազմով:

13.5. Պարտատերերի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ անձանց (առկայության դեպքում) հանդեպ ունեցած պարտավորությունների մարումից հետո մնացած լուծարային միջոցները փոխանցվելու են Բանկի միակ բաժնետիրոջը:

Հոդված 14. Եզրափակիչ դրույթներ

14.1. Սույն Կանոնադրությունը կազմված է հայերեն լեզվով:

14.2. Սույն Կանոնադրությունն ուժի մեջ է պետական գրանցման պահից: